# ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ ԼՂՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 8-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ

Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը ԼՂՀ անկախության 8-րդ տարեդարձի առիթով շնորհավորական նամակ է հղել ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանին, որտեղ մասնավորապես ասվում է.

*«Հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության, Գերագույն Հոգևոր խորհրդի, պաշտոնեության և անձամբ իմ անունից շնորհավորում եմ Ձեզ և Լեռնային Ղարաբաղի ողջ հայությանը՝ անկախության նվաճման 8-րդ տարեդարձի առիթով:*

*Թող Աստված անկախության բազում տասնամյակներ պարգևի նորահաստատ հանրապետությանը և անսասան պահի մեր սիրելի արցախցիների աննկուն և ազատատենչ ոգին»:*

*ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ*